

կընցած են : Ի՞սոյ ձիշդ խօսելով՝ աս թելերուն միայն մէջտեղը թել կընայ ըսուիլ, ուր որ շատ փետրալից չեն, իսկ անոնց արմատը ու ծայրերնին փետրալից է . էգ դրախտահաւին թելերուն ծայրը եղած փետուրները արուինէն աւելի կարծ են, և ասով միայն կը տարբերի արուէն :

Դվառուն վրան ու վիզը կարծես թէ թաւիշով մը ծածկուած է, շիտակ, կարծ ու անշարժ փետուրներով ձեւացած . իսկ փորուն ու կոնըկին փետուրները աւելի երկայն են ու մետաքսի պէս փափուկ : Ի՞ոլոր աս փետուրները իրարմէ տարբեր գոյներ ունին, և լյսին զանազան դիրքով զարնելէն՝ ան գոյներն ալ կերպ կերպ կը փոխուին ու այլեայլ տեսք կ'առնեն :

Ո՞ւ արմնոյն մեծութեանը նայելով՝ գլուխը շատ պղտիկ է, աչուրներն ալ աւելի մանր, ու կտուցին բացուածքին խիստ մօտ :

Ե՞ս գեղեցիկ թռչունը ամէն տեղ չկայ . միայն Ե՞սիայի ան կողմերը կը գտնուի՝ ուր որ համեմերու բոյսերը աղէկ առաջ կուգան, և աւելի Ե՞րու ըսուած կղզիներուն մէջ կը գտնուի . բայց նաև՝ որ կուինէ ային մէջ անձանօթ չէ աս թռչունը :

Դրախտահաւը համեմի տունկեր բուսնող երկիրներու մէջ գտնուելով կ'երենայ թէ իրեն աւելի սիրած կերակուրն ալ ան տեսակ բոյսերուն վրայ կը գտնէ . ուստի սուտ կ'ըլլայ ան առասպելը՝ թէ ցողով միայն կ'ապրի : Ո՞մոն Հելպիկիոս՝, որ Հընդկաստան Ճամբորդութիւն ըրած է, կ'ըսէ թէ բարձր ծառի մը տուած կարմիր ու մանր պտղովը կ'ապրի . Ի ինսէոս կ'ըսէ թէ իրեն որսը մեծ թիթեռներ են, Պոնցիոս ալ կ'ըսէ թէ երբեմն իրմէ պղտիկ թռչուներ կը բռնէ ու զանոնք կ'ուտէ : Դրախտահաւերուն սովորական բնակութեան տեղերը անտառներն են, և ծառերու վրայ կը թաւին, ուր որ

ծառերու ձիւղերուն վրայ հաստատած թեթև հիւղերու մէջ Հնդիկները պահութած կը կենան, ու անոնց մէջէն կը քաշեն եղէգէ շինած նետերնին ու կը զարնեն :

Դրախտահաւին թռչութիլը ծիծառնիկի թռչելուն նման է, անոր համար է որ Ուերնաթի ծիծառ՝ ալ կ'ըսուի : Ոմանք ալ կ'ըսեն թէ իրօք ծիծառի կը նմանի, միայն անկից աւելի բարձր կը թռչի, և միշտ օդին վերերը կը կենայ :

Կ'երենայ թէ հիները աս թռչունին վրայ ամենեին տեղեկուի չունէին . Վոզի անոնցմէ մէկն ալ ցիշեր դրախտահաւին ան յատկուինեթը՝ որով բուլուվին կը տարբերի մէկալ թռչուններէն . իրեն երկայն փետուրները, պոչին երկայն թելերը, և ան բնական թաւիշը՝ որով գլուխը ծածկուած է . անոր համար անհիմն է ոմանց կարծիքը՝ որ կ'ըսեն թէ հիներուն Փիւնիկ ըսած թռչունը աս դրախտահաւն էր . աս բանս ան երկու թըրուններուն մէջ գտնուած նմանութեամբը կ'ուզեն հաստատել, բայց անոնց թէ յատկութիւններուն և թէ վրանին շինուած առասպելներուն իրարու հետ ունեցած նմանութիւնը գրեթէ ոչինչ է :

### Խառոց Բնական նշանները :

#### Դռէկտէմբեր :

ՅՈՒՐՏԸ քանի կ'երթայ կը սաստանայ, օրերը կը կարձընան, արեւուն երեսը հազիւ կ'երենայ ու մէկէն կը ծածկուի : Խնչուան ամսութանը մէկը այսպէս օր օրուան վրայ կը կարձընայ ցորեկը, ու գիշերը կ'երկընայ :

Չմեռը սկսելուն նշանները բոլոր բնութեան վրայ կ'երենան :

Կովերը , եզներն ու ոչխարները ա-  
խոռնին փակուած են . գեղացիներն  
ալ գիշերները հօն ժողվուած՝ տնա-  
կան գործքերու հետ կ'ըլլան :

Ո՞արդիկ իրենց անասունները կը  
հոգան ու մշակութեան հարկաւոր  
գործիքները կը պատրաստեն . կա-  
նայք կը մանեն , կը հիւսեն , կը կարեն :

Հովիւը՝ փայտի տաշեղներով ու  
տերևոտ ձղերով անկողին կը նկատ-  
րաստէ անասուններուն :

Այգեպանը տնկելու որթերուն  
համար տեղերը կը պատրաստէ , գե-  
տինը կը ծակէ՝ այնպիսի կերպով որ  
հողը չեցուի մէջը :

Ուսումնասիրաց ալ զուարձալի ու  
յարմար ատեն կուտան երկայն գի-  
շերները իրենց ախորժած ուսմանցը  
հետ զբաղելու , որով բոլոր գիշերն  
ալ կարձ կ'երենայ : Ուսմանց տուած  
մտաւոր զուարձութենէն վեր զուար-  
ձութիւն չիրնար ըլլալ . երանի անոր  
որ ասոր համը առեր է :

Ըստ երկտասան ամսամատունս  
Տարաժամեալ տարւոյն յելս .  
Բաղնէ յետին սրբաժից ըզդրուն .  
Մհծատարած ածեալ թես  
Ընդ այն մշիմ ոլորտ խոր  
Ուստի չըգայ եկաւոր :  
Այլ զի գու , զի քեզ ամ գնայուն  
Ցողունականդ ՚ի հրաժեշտ  
Ածել սրտից յամր ըզբախիւն ,  
Կիսոց արհած կիսոց հեշտ . . .  
Ո՛չ , գիտացի , ՚նդ քեզ տանիս  
Անտուստ մասունս երկդիմս .  
Հրեշտակ լրտես դառնաս ՚ի մէնջ ,  
Եւ յանցանել քո սրավար  
Ցաւիտենից կայիցն ընդ մէջ ,  
Զոմն ՚ի վեր տաս զոմն ՚ի վայր . . .  
Ա՛հ , յորն արդեօք , ով մանկիկ ,  
Զայս ամ յըղեաց քո սրբախ :

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՒՏԻՑ

Ե . Ա Է Ղ Ր Ա Ս Ա Խ Ե Ր Ո Ր Դ Դ Ա :

ԱՄԵՐԻԿԱՅԻ գիւտը Ապանիացւոց  
կործանմանը պատճառ եղաւ՝ ոսկիին  
տեղը անոնց ցուցընելով . բայց Լու-  
րոպայի ուրիշ ազգերուն ոսկիին աւե-  
լի ազնիւ բարիքներ ալբերաւ : Վա-  
նի որ Ապանիացիք անհոգ կեցած՝ ի-  
րենց հանգիստը կը նայէին , Ճարտար  
ազգերը նոր բաներ գտան Ամե-  
րիկայի մէջ , որ են լեղակ՝ , ծխախոտ՝ ,  
բամբակ , վանիլիա , քաքաղյ , քինա ,  
որդան կարմիր : Խնդղիացիք ու Հո-  
լանտացիք ուրիշ ամէն ազգերէն աւե-  
լի աս անձանօթ գանձերը ձեռք ձգե-  
ցին : Վաքաղյ ծառին պտղէն չիքո-  
լաթ շինելը Ամերիկացիք սորվեցու-  
ցին Լուրոպացւոց . վասն զի չիքոլաթը  
կը շինուի քաքաղյին կուտերէն որ կը  
մաքրեն կը կեղեւն , կը խարկեն , ան-  
կանի՝ մէջ կը ծեծեն , շաքարով կը  
շաղուեն ու կաղպարի մէջ կը թափեն :  
Լուրոպա 1520ն բերին Ապանիացիք ,  
և Գաղղիայի մէջ չիքոլաթ խմելու  
սովորութիւնը Արշալիկօ կարդինա-  
լին եղբայրը մտցուց 1662ն : Լու-  
րոպայի մէջ ամէն տարի քսանու-  
իրեք միլիոն լիտր քաքաղյ կ'երթայ  
կ'ըսեն :

Չիքոլաթէն ետև գանք խահուէի  
գիւտին : Ամենակին յայտնի չէ թէ  
Երբ գտնուած է խահուէն , կամթէ  
Երբ սկսած է գործածուիլ : Բառ կայ  
թէ խահուէն հովիւ մը գտաւ , տես-  
նելով որ երեմն իր այծերն ու ուղ-  
տերը խահուէի տունկէն ուտելէն  
ետքը՝ բոլոր գիշերը արթուն կը կե-  
նային ու կը ցատքըտէին : Ուրիշները  
կը զուրցեն թէ խահուէն տաճկի տէվ-  
րիշ մը գտաւ , որ ուրիշներէն աւելի